ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16-ը հուլիսի 2023 թվականի N 93 Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ԹԻՎ 8 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներով, ***ավագանին որոշում է՝***

1.Հաստատել 16-ը հուլիսի 2023թ. թիվ 8 արտահերթ նիստի օրակարգը հետևյալ հարցերով՝

2.Եղեգիս համայնքի ղեկավարի հաղորդումները 2023թ. առաջին կիսամյակի բյուջեի կատարման ընթացքի մասին,

3.25-ը հունվարի 2023 թվականի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի 2023 թվականի տարեկան բյուջեն հաստատելու մասին» թիվ 02Ն որոշմամբ հաստատված բյուջեում վերաբաշխում կատարելու մասին,

4.Եղեգիս համայնքի մի խումբ բնակիչների ֆինանսական օգնություն ցուցաբերելու մասին,

5.Եղեգիս համայնքի 2023 թվականի առաջին կիսամյակի տարեկան աշխատանքային պլանի և իրականացված ծրագրերի վերաբերյալ հաշվետվության հաստատման մասին,

6.Եղեգիս համայնքի գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունը հաստատելու մասին,

7.Քարագլուխ գյուղի հին դպրոցի շենքում, ինչպես նաև ֆուտբոլի դաշտում վերանորոգման և բարեկարգման աշխատանքներ իրականացնելուն համաձայնություն տալու մասին,

8.Եղեգիս համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին,

9.Պետական սեփականություն հանդիսացող հողերը մրցութային կարգով կառուցապատման իրավունքով տրամադրելու մասին,

10.Եղեգիս համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին,

11.Եղեգիս համայնքի Եղեգիս գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 1,4հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողատեսքն աճուրդային կարգով օտարելու մասին,

12.Եղեգիս համայնքի Եղեգիս գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 1,173հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողատեսքն աճուրդային կարգով օտարելու մասին,

13.Եղեգիս համայնքի Քարագլուխ գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողատեսքերից մրցութային կարգով վարձակալության տրամադրելու մասին,

14.Եղեգիս համայնքի Հերմոն գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողատեսքերից մրցութային կարգով վարձակալության տրամադրելու մասին,

15.Եղեգիս համայնքի Եղեգիս գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողատեսքերից մրցութային կարգով վարձակալության տրամադրելու մասին,

16.Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի զինանշանը հաստատելու մասին,

17.23-ը հունիսի 2023թ. թիվ92Ա որոշումն անվավեր ճանաչելու մասին,

18.Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին:

Կողմ՝ 8 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝0

Ստեփանյան Արթուր
Մարտիրոսյան Նարեկ
Մարտիրոսյան Զոյա ***բացակա***
Հակոբյան Արտուշ
Պողոսյան Հրաչյա
Մանուկյան Սաթինե
Նազարյան Արգիշտի
Ղահրամանյան Վարդան
Գաբրիելյան Ահարոն
Բաբայան Վահե ***բացակա***
Սմբատյան Մամիկոն ***բացակա***
Հարությունյան Կարեն ***բացակա***
Միքայելյան Քրիստինա ***բացակա***
Ստեփանյան Սաշա ***բացակա***

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
<< Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16-ը հուլիսի 2023 թվականի N 94 Ա

ՎԱՅՈՑ ՁՈՐ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԸ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 83-րդ հոդվածի 2-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով

ավագանին որոշում է՝

Ընդունել ի գիտություն՝ Եղեգիս համայնքի ղեկավարի հաղորդումները 2023թ. առաջին կիսամյակի բյուջեի կատարման ընթացքի մասին (համաձայն սույն որոշման կից հավելվածի):

Կողմ՝ 8 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝0

Ստեփանյան Արթուր
Մարտիրոսյան Նարեկ
Մարտիրոսյան Զոյա ***բացակա***
Հակոբյան Արտուշ
Պողոսյան Հրաչյա
Մանուկյան Սաթինե
Նազարյան Արգիշտի
Ղահրամանյան Վարդան
Գաբրիելյան Ահարոն
Բաբայան Վահե ***բացակա***
Սմբատյան Մամիկոն ***բացակա***
Հարությունյան Կարեն ***բացակա***
Միքայելյան Քրիստինա ***բացակա***
Ստեփանյան Սաշա ***բացակա***

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Հավելված
Եղեգիս համայնքի ավագանու
16-ը հուլիսի 2023թ. N 94Ա որոշման

Եկամտային մաս. հազ.դրամ

Եկամտատեսակ	Նախատեսված (1-ին կիսամյակ)	Կատարողական (1-ին կիսամյակ)	Կատարման տոկոս
Անշարժ գույքի հարկ	5100,0	3460,9	67,9
Գույքահարկ փոխադրամիջոցներից	14400,0	11912,6	82,7
Տեղական տուրքեր	500,0	268,9	53,8
Ընդամենը գույքի վարձակալությունից եկամուտներ	6400,0	4174,4	65,2
Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ	101713,9	101713,9	100
Այլ դոտացիաներ	0	0	0
Տեղական վճարներ	6250,0	1963,8	31,4
Այլեկամուտներ /Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից, Վարչական գանձումներ,օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված համայնքի բյուջե մուտքագրման ենթակա այլ եկամուտներ/	4000,0	2123,6	53,1

Ծախսային մաս	Նախատեսված (1-ին կիսամյակ)	Կատարողական (1-ին կիսամյակ)	Կատարման տոկոս
Դրամով վճարվող աշխատավարձեր և հավելավճարներ	64550,0	53794,6	83,3
Պարգևատրումներ	0	0	0
Էներգետիկ ծառայություններ	7000,0	6046,5	86,4
Կոմունալ ծառայություններ	6000,0	5280,0	88,0
Կապի ծառայություններ	1000,0	739,4	73,9
Գործողությունների և շրջագայությունների ծախսեր	200,0	182,4	91,2
Պայմանագրային ծառայությունների ձեռքբերում	7740,0	2969,0	39,1
Դրամաշնորհներ	8250,0	2800,0	33,9
Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ	2750,0	2470,0	89,8
Սուբսիդիաներ	9300,0	10254.5	110,3
Այլ ծախսեր	500,0	297,8	59,6
Շենքերի և շինություններ կապիտալ վերանորոգում, շինարարություն	33770.2	5344,8	15,8
Մեքենաներ և սարքավորումներ, այլ հիմնական միջոցներ	13700,0	3492,7	25,5
Նյութեր	6045,0	3252,8	53,8

Համայնքի ղեկավար ..... Արթուր Ստեփանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16-ը հուլիսի 2023 թվականի N 95 Ն

25-Ը ՀՈՒՆՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 02Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջներով և «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, ***ավագանին որոշում է՝***

1.Հաստատել Եղեգիս համայնքի 25 հունվարի 2023 թվականի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի 2023 թվականի տարեկան բյուջեն հաստատելու մասին» թիվ 02Ն որոշման մեջ կատարվող հետևյալ վերաբաշխումը.

1)Պակասեցնել

ա.համայնքի բյուջեի գործառնական դասակարգման բաժին 11 խումբ 01 դաս 02 ծրագիր 51՝ պահուստային ֆոնդ ոլորտի տնտեսագիտական դասակարգման 4891/պահուստային միջոցներ/ հոդվածից 20 000 000.0 /քսան միլիոն/ ՀՀ դրամ,

բ.համայնքի բյուջեի գործառնական դասակարգման բաժին 06 խումբ 03 դաս 01 ջրամատակարարում ոլորտի տնտեսագիտական դասակարգման 5134 /նախագծահետազոտական ծախսեր/ հոդվածից 400 000.0 /չորս հարյուր հազար/ ՀՀ դրամ և համապատասխանաբար

2)ավելացնել՝

ա.համայնքի բյուջեի եկամուտներ /հատված 1/ 1392 տող ՝ վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր հոդվածին և նպատակաուղղել գործառնական դասակարգման բաժին 04 խումբ 02 դաս 04 ծրագիր 51 ոռոգման ցանցի կառուցում ծրագրի 5112 /շենքերի և շինությունների շինարարություն/ հոդվածին 20 000 000.0 /քսան միլիոն / ՀՀ դրամ:

բ.Համայնքի բյուջեի գործառնական դասակարգման բաժին 06 խումբ 03 դաս 01 ծրագիր 51՝ ջրամատակարարում ոլորտի տնտեսագիտական դասակարգման 5112 /շենքերի և շինությունների շինարարություն/ - հոդվածին՝ 400 000,0 /չորս հարյուր հազար/ ՀՀ դրամ:

՝Վերոնշյալ փոփոխությունները կատարվում են համայնքի սուբվենցիոն ծրագրերի

շրջանակներում կատարվող ոռոգման և խմելու ջրի կառուցման աշխատանքների կատարման համար:

Կողմ՝ 8 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝0

Ստեփանյան Արթուր
Մարտիրոսյան Նարեկ
Մարտիրոսյան Զոյա ***բացակա***
Հակոբյան Արտուշ
Պողոսյան Հրաչյա
Մանուկյան Սաթինե
Նազարյան Արգիշտի
Ղահրամանյան Վարդան
Գաբրիելյան Ահարոն
Բաբայան Վահե ***բացակա***
Սմբատյան Մամիկոն ***բացակա***
Հարությունյան Կարեն ***բացակա***
Միքայելյան Քրիստինա ***բացակա***
Ստեփանյան Սաշա ***բացակա***

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16-ը հուլիսի 2023 թվականի N 96 Ա

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻ ԽՈՒՄԲ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, հիմք ընդունելով Եղեգիս համայնքի ավագանու 24/10/2019 թվականի թիվ 72Ն որոշումը, Եղեգիս համայնքի ավագանու 08/12/2022թ. թիվ 136Ա որոշմամբ ստեղծված հանձնաժողովի եզրակացությունը, ***ավագանին որոշում է՝***

Տալ համաձայնություն սույն որոշման կից հավելվածներով ներկայացված Եղեգիս համայնքի բնակիչներին տրամադրելու ֆինանսական օգնություն:

Կողմ՝ 7 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝0

Ստեփանյան Արթուր **չի քվեարկել**
Մարտիրոսյան Նարեկ
Մարտիրոսյան Զոյա ***բացակա***
Հակոբյան Արտուշ
Պողոսյան Հրաչյա
Մանուկյան Սաթինե
Նազարյան Արգիշտի
Ղահրամանյան Վարդան
Գաբրիելյան Ահարոն
Բաբայան Վահե ***բացակա***
Սմբատյան Մամիկոն ***բացակա***
Հարությունյան Կարեն ***բացակա***
Միքայելյան Քրիստինա ***բացակա***
Ստեփանյան Սաշա ***բացակա***

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

Հավելված 1
Եղեգիս համայնքի ավագանու
16-ը հուլիսի 2023թ. թիվ 96 Ա որոշման

Եղեգիս համայնքի հետևյալ բնակիչներին տրամադրել դրամական օգնություն, որպես սոցիալապես անապահով ընտանիքի՝

1. Վանյա Ռուբենի Պողոսյան 40000 ՀՀ դրամ գ.Շատին
2. Անժելա Ջանիբեկի Հովակիմյան 30 000 ՀՀ դրամ գ. Շատին
3. Ժաննա Նորիկի Հովակիմյան 30 000 ՀՀ դրամ գ. Շատին
4. Ռեհան Համայակի Սարգսյան 30 000 ՀՀ դրամ գ. Շատին
5. Գրիգոր Գագիկի Մաթևոսյան 40 000ՀՀ դրամ գ.Շատին
6. Արսեն Ռաֆիկի Ազիզյան 30 000 ՀՀ դրամ գ. Շատին
7. Էդվարդ Հայկի Զաքարյան 35000 ՀՀ դրամ գ. Շատին
8. Սամուել Հայրիկի Մարտիրոսյան 50 000 ՀՀ դրամ գ.Շատին
9. Արտյոմ Սպարտակի Ղազարյան 50 000 ՀՀ դրամ գ. Շատին
10. Պետրոս Վարդգեսի Հակոբյան 40 000 ՀՀ դրամ գ. Աղնջաձոր
11. Վազգեն Ալեքսանդրի Արսենյան 30 000 ՀՀ դրամ գ. Աղնջաձոր
12. Գարանուշ Խաչատուրի Հակոբյան 40 000 ՀՀ դրամ գ. Աղնջաձոր
13. Հարություն Մարտինի Հարությունյան 40 000 ՀՀ դրամ գ. Արտաբույնք
14. Ռիմա Համբարձումի Համբարձումյան 30 000 ՀՀ դրամ գ. Թառաթումբ
15. Գեղամ Երջանիկի Մարկոսյան 40 000 ՀՀ դրամ գ. Թառաթումբ
16. Նարինե Մանուկի Գրիգորյան 40 000 ՀՀ դրամ գ. Սալլի

Ընդամենը՝ 595 000 /հինգ հարյուր իննսունհինգ հազար/ ՀՀ դրամ

Համայնքի ղեկավար Արթուր Ստեփանյան

Հավելված 2
Եղեգիս համայնքի ավագանու
16-ը հուլիսի 2023թ. թիվ 96 Ա որոշման

Եղեգիս համայնքի հետևյալ բնակիչներին տրամադրել դրամական օգնություն՝ յուրաքանչյուր նորածին երեխայի խնամքի համար 30 000- ական դրամ.

1. Լևոն Իգիթի Ադամյան 60000 ՀՀ դրամ գ. Շատին
2. Մարգարիտ Սոսի Ավետիսյան 30000 ՀՀ դրամ գ. Շատին
3. Մարիաննա Էդիկի Անտոնյան 30000 ՀՀ դրամ գ. Թառաթումբ
4. Նարեկ Արմենակի Առուստամյան 30000 ՀՀ դրամ գ. Աղնջաձոր
5. Մելինե Մարտիկի Գասպարյան 30000 ՀՀ դրամ գ. Հորբատեղ
6. Գարիկ Բագրատի Սարգսյան 60000 ՀՀ դրամ գ. Հորբատեղ

Ընդամենը՝ 240 000 /երկու հարյուր քառասուն հազար/ ՀՀ դրամ

Համայնքի ղեկավար Արթուր Ստեփանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16-ը հուլիսի 2023 թվականի N 97 Ա

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4.1)-րդ կետի պահանջներով, ***ավագանին որոշում է՝***

Հաստատել Եղեգիս համայնքի 2023 թվականի առաջին կիսամյակի ընթացքում տարեկան աշխատանքային պլանի և իրականացված ծրագրերի վերաբերյալ հաշվետվությունը, համաձայն սույն որոշման կից հավելվածի:

Կողմ՝ 8 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝0

Ստեփանյան Արթուր
Մարտիրոսյան Նարեկ
Մարտիրոսյան Զոյա ***բացակա***
Հակոբյան Արտուշ
Պողոսյան Հրաչյա
Մանուկյան Սաթինե
Նազարյան Արգիշտի
Ղահրամանյան Վարդան
Գաբրիելյան Ահարոն
Բաբայան Վահե ***բացակա***
Սմբատյան Մամիկոն ***բացակա***
Հարությունյան Կարեն ***բացակա***
Միքայելյան Քրիստինա ***բացակա***
Ստեփանյան Սաշա ***բացակա***

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

Հավելված

Եղեգիս համայնքի ավագանու

16-ը հուլիսի 2023թ. N 97 Ա որոշման

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2022Թ. ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԸ 4
2023թ. 1-ին եռամսյակում կատարված աշխատանքները 4
2023թ. 2-րդ եռամսյակում կատարված աշխատանքները..... 5
ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ 9

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2023թ-ին Եղեգիս համայնքում աշխատանքներն ու ծրագրերն իրականացվել են՝ համաձայն համայնքի 2023-2027թթ. հնգամյա զարգացման ծրագրի դրույթներին, 2023թ. տարեկան աշխատանքային պլանի, հաշվի առնելով համայնքի առկա ռեսուրսները, առանձնահատկությունները, զարգացման գերակա ուղղությունները, նախապես քարտեզագրված ծրագրային առաջնահերթությունները:

Տնտեսական և սոցիալական զարգացման ուղված այլ ծրագրեր:

Հաշվետվությունը բաղկացած է ըստ եռամսյակներ կատարված աշխատանքներից և համայնքի կապիտալ ծեռքբերումներից 2023 թվականի առաջին կիսամյանկի ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԸ

ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքում իրականացված աշխատանքների շնորհիվ գրանցվել են զգալի արդյունքներ, ըստ ոլորտների և ուղղությունների:

Համայնքի Շատին, Վարդահովիտ, Սալլի, Աղնջաձոր, Քարագլուխ, Թառաթումբ, Գողթանիկ, Հերմոն, Հորս, Արտաբույնք, Հորբատեղ, Եղեգիս բնակավայրերում ամեն շաբաթ կատարվել են սանիտարական մաքրման և աղբահանման աշխատանքներ:

2023թ. 1-ին եռամսյակում կատարված աշխատանքները

1. Աղնջաձոր գյուղում կատարվել է վթարված խմելու ջրի հատվածի վերանորոգում:
2. Հերմոն գյուղում կատարվել է վթարված խմելու ջրի հատվածի հետլիցք:
3. Գողթանիկ գյուղի ճանապարհահատվածում կատարվել է առաջացած սառցաշերտի սառցազատում և ճանապարհեզրի ջրահեռացման առվի փորում:
4. Աղնջաձոր գյուղում կատարվել է վթարված խմելու ջրի վերանորոգում:
5. Շատին-Եղեգիս գյուղերում կատարվել է ճանապարհների աղբի հեռացում:
6. Կատարվել է ձնամաքրման աշխատանքներ Հերմոն, Հորբատեղ, Եղեգիս, Արտաբույնք, Քարագլուխ, Հորս, Սալլի, Գողթանիկ, Վարդահովիտ, Թառաթումբ և Աղնջաձոր գյուղերում:
7. Եղեգիս գյուղում կատարվել է անասնախմոցի տարածքում տեղի հարթեցման աշխատանքներ:
8. Շատին գյուղում կատարվել է ճանապարհի եզրերի երթևեկությանը խոչընդոտող համապատասխան ծառերի էտման աշխատանքներ:
9. Շատին գյուղում կատարվել է գերեզմաններ տանող ճանապարհի հարթեցման աշխատանքներ:
10. Թառաթումբ գյուղում կատարվել է գերեզմանների տարածքում սելավատարի կառուցում:
11. Շատին գյուղում կատարվել է «Աշարադուզ» կոչվող տարածքում ճանապարհների բարեկարգման աշխատանքներ:
12. Աղնջաձոր գյուղում կատարվել է հասարակական սեպտահորի փորման աշխատանքներ:

2023թ. 1-ին եռամսյակի ընթացքում՝

1. Հրավիրված խորհրդակցությունների քանակը՝ 36:
2. Համայնքի բնակիչների ընդունելությունների քանակը 283:

3. Բնակավայրերի այցելությունների քանակը՝ 42, որից Շատին՝ 6, Արտաբույնք՝ 7, Հորբատեղ՝ 2 Հերմոն՝ 2, Հորս՝ 2, Վարդահովիտ՝ 0, Գողթանիկ՝ 4, Սալլի՝ 4, Քարագլուխ՝ 4. Աղնջաձոր՝ 2, Թառաթումբ՝ 3, Եղեգիս՝ 6:
4. Ավագանու նիստերի քանակը՝ թվով 3, ավագանու որոշումներ՝ 38, համայնքի ղեկավարի որոշումներ՝ 95, համայնքի ղեկավարի կարգադրություններ՝ 21, աշխատակազմի քարտուղարի հրամաններ՝ 48, ելից գրություններ՝ 390, մտիցներ՝ 569:
5. Սոցիալական աշխատողի կողմից տնային այցելությունների քանակը՝ թվով 31
.Սոցալական աջակցություն ցուցաբերելու նպատակով:
.Բնակարանային պայմանների ուսումնասիրություն:
.Արցախի Հանրապետությունից ժամանածներին հաշվառելու և կարիքի գնահատում իրականացնելու նպատակով:
6. Հանրային միջոցառումներ՝

- Հանրային քննարկումներ համայնքի բնակիչների հետ նախապես սահմանված ժամանակացույցի՝ ըստ բնակավայրերի:
- Բանակի օրվա կապակցությամբ Հարգանքի տուրք ի հիշատակ Արցախյան պատերազմի մասնակից հերոսների:
- Տյառնընդառաջ:
- «Շվեյցարական Սուրբ Ծնունդ» Առնո Բաբաջանյանի անվան համերգասրահում՝ Եղեգիս համայնում գործող երգչախմբերի մասնակցությամբ:
- Կանանց Միջազգային օրվա առթիվ ավանդական դարձած այց ՝ համայնքի կրթական հաստատություններին, Հռիփսիմե առողջության կենտրոնին, բնակավայրերի բուժկետերի կին աշխատակիցներին, Հայրենիքի նվիրյալ անմահացած հերոսների մայրերին և կանանց:
- Տոնական մեծ միջոցառում Արտաբույնքի մշակույթի տանը՝ կանանց տոների առթիվ: Միջոցառան միջոցաով անփոփ ներկայացվեց տոնի ողջ խորհուրդը՝ սկզբնավորման ակունքները և պարային, երաժշտական համարներով հանդես եկան տեղի շնորհալի պատանիները:
- Հոբելյանական տարեդարձ Եղեգիս համայնքում (Վարդանուշ Եղյայի Գյուլնազարյան):

2023թ. 2-րդ եռամսյակում կատարված աշխատանքները

1. Քարագլուխ գյուղում կատարվել է ծառերի ճյուղերի կտրման աշխատանքներ:
2. Սալլի գյուղում կատարվել է ծառերի ճյուղերի կտրման աշխատանքներ:
3. Շատին գյուղում կատարվել է ոռոգման ցանցի նորոգման աշխատանքներ:
4. Շատին գյուղի «Ներքևի գերեզմաններ» կոչվող տարածքում կատարվել է ոռոգման ցանցի նորոգման աշխատանքներ:

5. Շատին գյուղում կատարվել է ոռոգման ցանցի նորոգում «Հոստուն» ջրի առվի ակունքի մաքրման աշխատանքներ:

6. Շատին գյուղի «Աշարադուզ» կոչվող հատվածում կատարվել է ճանապարհի նորոգում:

7. Աղնջաձոր գյուղի վարչական ղեկավարի նստավայրի հարակից տարածքում կատարվել է հողային աշխատանքներ:

8. Հերմոն գյուղում կատարվել է վթարված ջրագծի վերականգնում և Հերմոն - Գողթանիկ ճանապարհահատվածում կատարվել ժայռի փլվածքի մաքրման, հարթեցման և հեռացման աշխատանքներ:

9. Աղնջաձոր գյուղի «Միջնաձոր» կոչվող տարածքում կատարվել է՝ ոռոգման առվի վնասված հատվածի նորոգման աշխատանքներ:

10. Կատարվել է Հերմոն-Գողթանիկ ճանապարհի բարեկարգման աշխատանքներ:

11. Կատարվել է Հերմոն -Գողթանիկ ճանապարհի բարեկարգման և գրունտի տեղափոխման աշխատանքներ:

12. Հերմոն գյուղում կատարվել է ոռոգման ցանցի նորոգման՝ խողովակի փոխարինման և քարերի հեռացման աշխատանքներ:

13. Գողթանիկ գյուղում կատարվել է գյուղապետարանի սեպտահորի փորման աշխատանքներ:

14. Քարագլուխ գյուղի մարզադաշտում կատարվել է շինարարական աշխատանքներ:

15. Վարդահովիտ գյուղում կատարվել է ոռոգման ցանցի բարեկարգման և սեպտահորերի փորման աշխատանքներ:

16. Շատին գյուղում կատարվել է հիվանդանոց տանող փողոցի բարեկարգման աշխատանքներ:

17. Աղնջաձոր գյուղում կատարվել է ոռոգման ցանցի բարեկարգման աշխատանքներ:

18. Քարագլուխ գյուղում կատարվել է դրենաժային կանավի փորման և խմելու ջրի վթարված հատվածի վերանորոգման աշխատանքներ:

19. Քարագլուխ գյուղում կատարվել է ֆուտբոլի մարզադաշտի շինարարության (փորում , հարթեցում,բարձում, տեղափոխում) աշխատանքներ:

20. Կատարվել է շինաքարի, ավազի, բեռնափոխադրում Քարագլուխ գյուղի ֆուտբոլի դաշտի համար:

21. Քարագլուխ գյուղի մարզադաշտի համար կատարվել է ժայռային հատվածի հարթեցում, էքսկավատորային մուրճի օգնությամբ:

22. Վարդահովիտ գյուղում կատարվել է զոդման աշխատանքներ և գեներատորի տեղափոխում:

23. Եղեգիս խոշորացված համայնքում կատարվել է փողոցային լույսերի վերանորոգում:

24. Արտաբույնք գյուղում Քառասուն աղբյուրներ կոչվող տարածքում կառուցվել է խոշոր եղջերավոր անասունների համար կացարան:

25. Եղեգիս գյուղում կատարվել է ոռոգման ջրի ակունքի վերանորոգման աշխատանքներ:

26. Աղնջաձոր գյուղում կատարվել է վթարված ջրագծերի հետլիցք, և Բերդաձոր կոչվող հատվածում ոռոգման առվի նորոգման աշխատանքներ:

27. Աղնջաձոր գյուղում կատարվել է զոհվածների պանթեոնի համար շեբենի տեղափոխման, հարթեցման աշխատանքներ:

28. Աղնջաձոր գյուղում կատարվել է բնակելի թաղամաս տանող ճանապարհի լայնացման, հարթեցման աշխատանքներ:

29. Քարագլուխ գյուղում կատարվել է հին դպրոցի հետնամասի ավելորդ գրունտի քանդում և տեղափոխում ֆուտբոլի մարզադաշտ:

30. Արտաբույնք գյուղում կատարվել է գերեզմանների հարակից տարածքում ջրահեռացման կանավների փորման աշխատանքներ:

31. Արտաբույնք գյուղում կատարվել է ջրահեռացման կանավների փորման աշխատանքներ:

32. Քարագլուխ գյուղում կատարվել է հին դպրոցի հետնամասի մաքրման աշխատանքներ, գրունտի բարձում և տեղափոխում:

33. Քարագլուխ գյուղում ֆուտբոլի մարզադաշտում կատարվել է հողային և ջրագծերի տեղափոխման աշխատանքներ:

34. Շատին գյուղում կատարվել է ջրահեռացման կանալի հետլիցք և գլխավոր ճանապարհին միացնող հարակից ճանապարհի մակերեսային բարեկարգման և մաքրման աշխատանքներ:

35. Քարագլուխ գյուղում էքսկավատորային մուրճով կատարվել է ժայռային հատվածի ջարդման և քարերի հեռացման աշխատանքներ:

36. Քարագլուխ գյուղում կատարվել է Յայլաղատեղիից «Թափից» մինչև ջրամբար ընկած հատվածի նորոգման աշխատանքներ:

37. Քարագլուխ գյուղում կատարվել է դեպի գերեզմաններ տանող թեք ճանապարհի շեբենապատման և հարթեցման աշխատանքներ:

38. Շատին գյուղում կատարվել է մահափոսերի փորման աշխատանքներ:

39. Աղնջաձոր գյուղում կատարվել է փողոցային լուսավորության նորոգման և Կալին կոչված տարածքի հարակից ջրագծի փորման աշխատանքներ:

40. Քարագլուխ գյուղում կատարվել է Քալլա և Թուխ Մանուկ տանող ճանապարհների նորոգման աշխատանքներ:

41. Աղնջաձոր գյուղում կատարվել է Կալ տանող ճանապարհի նորոգման աշխատանքներ:

42. Քարագլուխ գյուղում կատարվել է ճանապարհի մակերեսային հարթեցման աշխատանքներ:

43. Թառաթումբ գյուղում կատարվել է գերեզմաններում կառուցվող պանթեոնում հողային աշխատանքներ:

44. Շատին գյուղում Յայլաղատեղիում Սողանլու կոչվող տարածքում կատարվել է խմելու ջրագծի փորման և հետլիցքի աշխատանքներ:

45. Քարագլուխ գյուղում Կալերի ներքև կոչվող հատվածում կատարվել է սողանքի հետևանքով փակված ճանապարհի մաքրման և բացման աշխատանքներ:

46. Քարագլուխ և Թառաթումբ գյուղերի սարեր՝ կատարվել է անասնաբույժերի տեղափոխում:

47. Քարագլուխ գյուղում կատարվել է հին դպրոցի հետնամասի մաքրման աշխատանքներ, գրունտի բարձում և տեղափոխում:

48. Ուազ բեռնատարի միջոցով տեղափոխվել է գեներատորը՝ Աղնջաձոր, Քարագլուխ, Թառաթումբ, Շատին, Սալլի,Գողթանիկ և Վարդահովիտ գյուղեր ոռոգման և խմելու ջրագծերի վերանորոգման նպատակով:

49. Կամազ բեռնատարի միջոցով կատարվել է շինանյութի (քար, ավազ) տեղափոխում Քարագլուխ գյուղի մարզադաշտի տարածքում:

50. Շատին գյուղում կատարվել է ոռոգման ցանցի վերանորոգման աշխատանքներ:

51. Աղնջաձոր գյուղում կատարվել է ոռոգման ջրի բացթողման համակարգի վերանորոգման աշխատանքներ:

2023թ. 2-րդ եռամսյակի ընթացքում՝

1. Հրավիրված խորհրդակցությունների քանակը՝ 18:

2. Համայնքի բնակիչների ընդունելությունների քանակը 377:

3. Բնակավայրերի այցելությունների քանակը՝ 59, որից՝ Շատին՝ **10**, Արտաբույնք՝ **6**, Հորբատեղ՝ **4** Հերմոն՝ **4**, Հորս՝ **3**, Վարդահովիտ՝ **3**, Գողթանիկ՝ **4,** Սալլի՝ **4**, Քարագլուխ՝ 4. Աղնջաձոր՝ **4**, Թառաթումբ՝ **4**, Եղեգիս՝ **5**:

5. Ավագանու նիստերի քանակը՝ թվով 4, ավագանու որոշումներ՝ 54, համայնքի ղեկավարի որոշումներ՝ 66, համայնքի ղեկավարի կարգադրություններ՝ 24, աշխատակազմի քարտուղարի հրամաններ՝ 40, ելից գրություններ՝ 407, մտիցներ՝ 578:

6. Սոցիալական աշխատողի կողմից տնային այցելությունների քանակը՝ թվով **70**

.Սոցալական աջակցություն ցուցաբերելու նպատակով:

.Բնակարանային պայմանների ուսումնասիրություն:

.Արցախի Հանրապետությունից ժամանածներին հաշվառելու և կարիքի գնահատում իրականացնելու նպատակով:

7. Հանրային միջոցառումներ՝

- «Ապրիլի 24՝ օր ոգեկոչման և խոնարհումի» որի արդյունքում իրականացվել է ծաղկեդրում Եղեգիս համայնքի բոլոր բնակավայրերում, որտեղ կան հուշահամալիրներ:
- «Մրցանակաբաշխություն Եղեգիս համայնքում էկոլոգիական միջանցքների ստեղծում Հարավային կովկասում 2» ծրագրի շրջանակներում:
- «Համապետական շաբաթօրյակ» Եղեգիս համայնքի բոլոր բնակավայրերում:
- «Քաղաքացու օրը Եղեգիս համայնքում» միջոցառումը ընդգրկուն էր և բաղկացած մի քանի փուլերից՝ հանրային քննարկում, հարց և պատասխան «Հայաստանի պատմության թանգարան» ՊՈԱԿԻ –ի տնօրեն՝ Դավիթ Պողոսյանի մասնակցությամբ, ազգային, համայնքին բնորոշ ուտեստների համտես, շնորհալի պատանիների, դպրոցականների ձեռքի աշխատանքների ցուցահանդես, մշակութային միջոցառում հմեմված ազգային երգ ու պարով, որը ամփոփվեց արշավով դեպի «Հոստունի վանք» կոչվող տարածք:
  - Մասնակցություն «Ճանաչիր Հայաստանը» մարզային զբոսաշրջային ցուցահանդես»-ին:
- Այցելություն 98-ամյա ֆրոնտավիկ Ապեր Դանուղյանին Մայիսի 9-ի Հաղթանակի օրվա կապակցությամբ:
  - «Բացահայտիր Վայոց ձորը ծրագրի շրջանակում արշավ դեպի Նորավանք»:

- Երեխաների պաշտպանության միջազգային օր՝ «Հունիսի մեկը Եղեգիս համայնքում»:

- «Արմենյան Երգչախմբի» մասնակցությամբ համերգ Աղնջաձոր և Քարագլուխ բնակավայրերում:
- «Բացահայտիր վայոց ձորը ծրագրի շրջանակում արշավ դեպի Գնդեվանք»:

ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

1. Ընթացքի մեջ են ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի Գողթանիկ, Հերմոն, Քարագլուխ, Արտաբույնք, Հորս, Թառաթումբ, Աղնջաձոր, Հորբատեղ և Եղեգիս բնակավայրերի ոռոգման առուների վերանորոգման աշխատանքները:
2. Ընթացքի մեջ են ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի Շատին, Թառաթումբ, Աղնջաձոր, Քարագլուխ և Արտաբույնք բնակավայրերի փողոցային լուսավորության ցանցի կառուցման աշխատանքները:
3. Ընթացքի մեջ են ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի Սալլի, Հորս, Վարդահովիտ և Գողթանիկ բնակավայրերի խմելու ջրի ջրագծերի վերանորոգման աշխատանքները:

Համայնքի ղեկավար Արթուր Ստեփանյան

Կազմող՝ համայնքի տուրիզմի և տնտեսական զարգացման պատասխանատու՝
Շուշանիկ Դանիելյան
էլեկտրոնային փոստ shushan.danielyan96@mail.ru կամ
shushanik.danielyan96@gmail.com

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16-ը հուլիսի 2023 թվականի N 98 Ա

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի և 77-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով, հիմք ընդունելով Եղեգիս համայնքի ղեկավարի 03/07/2023թ. թիվ163Ա որոշումը, ***ավագանին որոշում է՝***

Հաստատել Եղեգիս համայնքի գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունը և ստորև ներկայացված գույքը գույքագրել Եղեգիսի համայնքապետարանի գույքային հաշվեկշռում՝

	Ապրանքի անվանումը	Քանակը	Արժեքը	Գումարը /դրամ/
1.	Տպիչ սարք HP LATERJET 115W	1 հատ	90000	90000
2.	Տպիչ սարք CANON MF3010	1 հատ	165000	165000
3.	Էլեկտրական տաքացուցիչ	1 հատ	6500	6500
4.	Ձայնային համակարգ 8880	1 հատ	110000	110000
5.	Խողովակ /730մմ/	4,6 մետր	58000	266800
6.	Տեսահսկման համակարգ	1 հատ	477940	477940
7.	Խողովակ ցինկե	16 հատ	27500	440000
8.	Խողովակ /530մմ/	11 մետր	40000	440000
9.	Խողովակ գոֆրե /320մմ/	120 մետր	7417	890000

Կողմ՝ 8 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝0

Ստեփանյան Արթուր
Մարտիրոսյան Նարեկ
Մարտիրոսյան Զոյա ***բացակա***
Հակոբյան Արտուշ
Պողոսյան Հրաչյա
Մանուկյան Սաթինե
Նազարյան Արգիշտի
Ղահրամանյան Վարդան

Կողմ՝ 8 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝0

Գաբրիելյան Ահարոն
Բաբայան Վահե ***բացակա***
Սմբատյան Մամիկոն ***բացակա***
Հարությունյան Կարեն ***բացակա***
Միքայելյան Քրիստինա ***բացակա***
Ստեփանյան Սաշա ***բացակա***

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16-ը հուլիսի 2023 թվականի N 99 Ա

ՔԱՐԱԳԼՈՒԽ ԳՅՈՒՂԻ ՀԻՆ ԴՊՐՈՑԻ ՇԵՆՔՈՒՄ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՖՈՒՏԲՈԼԻ ԴԱՇՏՈՒՄ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով, ***ավագանին որոշում է՝***

Տալ համաձայնություն Եղեգիս համանքի սեփականություն հանդիսացող Քարագլուխ գյուղի հին դպրոցի շենքում, ինչպես նաև ֆուտբոլի դաշտում վերանորոգման և բարեկարգման աշխատանքներ իրականացնելու համար:

Կողմ՝ 8 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝0

Ստեփանյան Արթուր
Մարտիրոսյան Նարեկ
Մարտիրոսյան Զոյա ***բացակա***
Հակոբյան Արտուշ
Պողոսյան Հրաչյա
Մանուկյան Սաթինե
Նազարյան Արգիշտի
Ղահրամանյան Վարդան
Գաբրիելյան Ահարոն
Բաբայան Վահե ***բացակա***
Սմբատյան Մամիկոն ***բացակա***
Հարությունյան Կարեն ***բացակա***
Միքայելյան Քրիստինա ***բացակա***
Ստեփանյան Սաշա ***բացակա***

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16-ը հուլիսի 2023 թվականի N 100 Ա

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2021թ. հունիսի 17-ի «Գյուղատնտեսական նշանակության հողերը ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի փոխադրման դեպքերը սահմանելու մասին» 987-Ն որոշման 1-ին մասի 14-րդ կետը, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի, համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի և բնակավայրերի տարածքների գոտևորման նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի N 609-ն, 2010 թվականի մարտի 4-ի N 208-ն ու Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի մայիսի 14-ի N 408 որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1920-Ն որոշման պահանջները, ***ավագանին որոշում է՝***

1.Հայաստանի Հանրապետության Վայոց ձոր մարզի Եղեգիս համայնքի Հորբատեղ գյուղի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում Հորբատեղ գյուղի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության արոտավայր հողատեսքից (կադաստրային ծածկագիր 10-030-0107-0042, մակերեսը 1,03807հա) առանձնացված 500 (հինգ հարյուր) ք/մ հողամասը փոխադրել բնակավայրերի նշանակության, գործառնական նշանակությունը հասարակական կառուցապատման (հյուրատուն կառուցելու համար):

2.Համայնքի ղեկավարին՝ կազմել և «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողով»-ի համաձայնեցմանը ներկայացնել համապատասխան հողաշինական գործը:

Կողմ՝ 8 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝0

Ստեփանյան Արթուր

Կողմ՝ 8 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝0

Մարտիրոսյան Նարեկ
Մարտիրոսյան Զոյա ***բացակա***
Հակոբյան Արտուշ
Պողոսյան Հրաչյա
Մանուկյան Սաթինե
Նազարյան Արգիշտի
Ղահրամանյան Վարդան
Գաբրիելյան Ահարոն
Բաբայան Վահե ***բացակա***
Սմբատյան Մամիկոն ***բացակա***
Հարությունյան Կարեն ***բացակա***
Միքայելյան Քրիստինա ***բացակա***
Ստեփանյան Սաշա ***բացակա***

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16-ը հուլիսի 2023 թվականի N 101 Ա

ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԸ ՄՐՑՈՒԹԱՅԻՆԿԱՐԳՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 14/01/2010 թվականի «Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական սահմաններում ընդգրկված՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, անհատույց (մշտական) օգտագործման, վարձակալության և կառուցապատման իրավունքով տրամադրման կարգը հաստատելու մասին» N16-Ն որոշման 7-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 74-րդ հոդվածի պահանջներով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 60-րդ կետով, հիմք ընդունելով Վայոց ձորի մարզպետի N01/06-1-1/4170-2023-15/06/2023 գրությունը, կից եզրակացությունը, ***ավագանին որոշում է՝***

1.Տալ համաձայնություն Եղեգիս համայնքի Վարդահովիտ գյուղի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող ջրային նպատակային նշանակության հողատեսքերը մրցութային կարգով կառուցապատման իրավունքով տրամադրելուն 50 /հիսուն/ տարի ժամկետով՝

կադաստրային ծածկագիր 10-041-0560-0013, մակերեսի չափը 0,04561հա, վկայական N11102022-10-0002,

կադաստրային ծածկագիր 10-041-0565-0020, մակերեսի չափը 0,02703հա, վկայական N18102022-10-0005:

2.Մեկնարկային գին սահմանել կադաստրային արժեքի 150 (մեկ հարյուր հիսուն) տոկոսը:

3. Տալ հայտարարություն Առավոտ օրաթերթում:

Կողմ՝ 8 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝0

Ստեփանյան Արթուր
Մարտիրոսյան Նարեկ
Մարտիրոսյան Զոյա ***բացակա***
Հակոբյան Արտուշ
Պողոսյան Հրաչյա
Մանուկյան Սաթինե
Նազարյան Արգիշտի
Ղահրամանյան Վարդան
Գաբրիելյան Ահարոն
Բաբայան Վահե ***բացակա***

Կողմ՝ 8 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

Սմբատյան Մամիկոն ***բացակա***
Հարությունյան Կարեն ***բացակա***
Միքայելյան Քրիստինա ***բացակա***
Ստեփանյան Սաշա ***բացակա***

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16-ը հուլիսի 2023 թվականի N 102 Ա

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2021թ. հունիսի 17-ի «Գյուղատնտեսական նշանակության հողերը ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի փոխադրման դեպքերը սահմանելու մասին» 987-Ն որոշման 1-ին մասի 14-րդ կետը, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի, համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի և բնակավայրերի տարածքների գոտևորման նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի N 609-ն, 2010 թվականի մարտի 4-ի N 208-ն ու Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի մայիսի 14-ի N 408 որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1920-Ն որոշման պահանջները

ավագանին որոշում է՝

1.Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության Վայոց ձոր մարզի Եղեգիս համայնքի Հերմոն գյուղի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում նախատեսվող փոփոխությանը, ըստ որի նախատեսվում է՝ Հերմոն գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 0.0765հա մակերեսով /կադաստրային ծածկագիր՝ 10-029-0102-0070/ և 0.04հա մակերեսով /կադաստրային ծածկագիր՝ 10-029-0136- / արոտավայր հողատեսքերը փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր նպատակային նշանակության, գործառնական նշանակությունը էներգետիկայի՝ ՓՀԷԿ կառուցելու համար:

2.Համայնքի ղեկավարին՝ կազմել և «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողով»-ի համաձայնեցմանը ներկայացնել համապատասխան հողաշինական գործը:

Կողմ՝ 0 Դեմ՝ 8 Ձեռնպահ՝0

Ստեփանյան Արթուր
Մարտիրոսյան Նարեկ
Մարտիրոսյան Զոյա ***բացակա***
Հակոբյան Արտուշ
Պողոսյան Հրաչյա
Մանուկյան Սաթինե
Նազարյան Արգիշտի
Ղահրամանյան Վարդան
Գաբրիելյան Ահարոն
Բաբայան Վահե ***բացակա***
Սմբատյան Մամիկոն ***բացակա***
Հարությունյան Կարեն ***բացակա***
Միքայելյան Քրիստինա ***բացակա***
Ստեփանյան Սաշա ***բացակա***

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16-ը հուլիսի 2023 թվականի N 103 Ա

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՂԵԳԻՍ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 1,4 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՏԵՍՔՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի գ) ենթակետով, 22-րդ կետի պահանջներով, ***ավագանին որոշում է՝***

1.Տալ համաձայնություն Եղեգիս համայնքի Եղեգիս գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքն աճուրդով օտարելու մասին՝ կադաստրային ծածկագիր 10-021-0107- , մակերեսը 1,4հա, մեկ լոտ:

2.Մեկնարկային գին սահմանել կադաստրային արժեքի 300 (երեք հարյուր) տոկոսը:

3. Տալ հայտարարություն Առավոտ օրաթերթում:

Կողմ՝ 0 Դեմ՝ 8 Ձեռնպահ՝ 0

Ստեփանյան Արթուր
Մարտիրոսյան Նարեկ
Մարտիրոսյան Զոյա ***բացակա***
Հակոբյան Արտուշ
Պողոսյան Հրաչյա
Մանուկյան Սաթինե
Նազարյան Արգիշտի
Ղահրամանյան Վարդան
Գաբրիելյան Ահարոն
Բաբայան Վահե ***բացակա***
Սմբատյան Մամիկոն ***բացակա***
Հարությունյան Կարեն ***բացակա***
Միքայելյան Քրիստինա ***բացակա***
Ստեփանյան Սաշա ***բացակա***

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16-ը հուլիսի 2023 թվականի N 104 Ա

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՂԵԳԻՍ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 1,173 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՏԵՍՔՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի գ) ենթակետով, 22-րդ կետի պահանջներով, ***ավագանին որոշում է՝***

1.Տալ համաձայնություն Եղեգիս համայնքի Եղեգիս գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքն աճուրդով օտարելու մասին՝ կադաստրային ծածկագիր 10-021-0009- , մակերեսը 1,173հա, մեկ լոտ:

2.Մեկնարկային գին սահմանել կադաստրային արժեքի 300 (երեք հարյուր) տոկոսը:

3. Տալ հայտարարություն Առավոտ օրաթերթում:

Կողմ՝ 0 Դեմ՝ 8 Ձեռնպահ՝ 0

Ստեփանյան Արթուր
Մարտիրոսյան Նարեկ
Մարտիրոսյան Զոյա ***բացակա***
Հակոբյան Արտուշ
Պողոսյան Հրաչյա
Մանուկյան Սաթինե
Նազարյան Արգիշտի
Ղահրամանյան Վարդան
Գաբրիելյան Ահարոն
Բաբայան Վահե ***բացակա***
Սմբատյան Մամիկոն ***բացակա***
Հարությունյան Կարեն ***բացակա***
Միքայելյան Քրիստինա ***բացակա***
Ստեփանյան Սաշա ***բացակա***

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16-ը հուլիսի 2023 թվականի N 105 Ա

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՐԱԳԼՈՒԽ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԻՑ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 8-րդ գլխի պահանջներով, ***ավագանին որոշում է՝***

1.Տալ համաձայնություն Եղեգիս համայնքի Քարագլուխ գյուղի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողատեսքերից 25/քսանհինգ/ տարի ժամկետով վարձակալության տրամադրելու մասին՝

1)կադաստրային ծածկագիր՝ 10-044-0219-0025, մակերեսը՝ 0,46397հա, արոտավայր հողատեսք,

